ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԱԿ-1/37
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան 29.01.2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն Լ. Ասրյանի, որը գործում է կենտրոնի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01 «37.Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ» ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կենտրոնին հատկացնել մինչև 188229100 (Մեկ հարյուր ութսունութ միլիոն երկու հարյուր քսանինը հազար հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կենտրոնը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կենտրոնի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կենտրոնից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կենտրոնը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կենտրոնը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կենտրոնի կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կենտրոնն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կենտրոնին.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կենտրոնին:

2.4. Կենտրոնը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կենտրոնի կատարողական հաշվետվությունները,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կենտրոնին կտրամադրի համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կենտրոնը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կենտրոնին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կենտրոնին վճարվելիք գումարներից:

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	«Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 3 շենք	ք. Երևան, Քաջազնունի 12
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011011732	Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 02661245
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Ն. Հարությունյան	_____ Լ. Ասրյան
/ ստրագրություն / Կ.Տ	/ ստորագրություն / Կ.Տ

Հավելված
2019թ. _____ ____ -ին
կնքված N _____ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում «Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող

Հ/հ	Միջոցառումների անվանումները	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատում	Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում դպրոցական և տարածքային մակարդակում՝ Երևան քաղաքում, Շիրակի, Արագածոտնի, ինչպես նաև համընդհանուր ներառական կրթության համակարգին չանցած 4՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում	Երևան քաղաքում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման և հատուկ հանրակրթական դպրոցների վերակազմակերպման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով, կիրականացվի այդ հաստատություններում սովորող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:	Կգնահատվեն Երևան քաղաքում գործող հատուկ հանրակրթական դպրոցների շուրջ 2000 սովորողներ:	30.12.2019	90000000
			Շիրակի և Արագածոտնի մարզերում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման և հատուկ հանրակրթական դպրոցների վերակազմակերպման գործընթացին աջակցություն ցուցաբերելու նպատակով,	Կգնահատվեն Շիրակի և Արագածոտնի մարզերում գործող հատուկ կանրակրթական դպրոցների շուրջ 150 սովորողներ:		

			կիրականացվի այդ հաստատություններում սովորող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:			
			Համընդհանուր ներառական կրթության համակարգին չանցած 4՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի և Վայոց Ձորի մարզերում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական, ինչպես նաև հատուկ հանրակրթական դպրոցներում կիրականացվի սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:	Համընդհանուր ներառական կրթության համակարգին չանցած 4՝ Գեղարքունիքի, Կոտայքի, Արարատի և Վայոց Ձոր մարզերում կգնահատվեն ներառական կրթություն իրականացնող հանրակրթական, ինչպես նաև հատուկ հանրակրթական դպրոցների շուրջ 600 սովորողներ:		
2.	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգում	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին, ինչպես նաև բարդ ու բազմակի խնդիրներ ունեցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին	Մանկավարժահոգեբանական աջակցություն կցուցաբերվի Սյունիքի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերում արդեն իսկ գործող տարածքային կենտրոնների, ինչպես նաև Երևան քաղաքում, Շիրակի և Արագածոտնի մարզերում նոր ձևավորվող տարածքային կենտրոնների մասնագետներին, կանցկացվեն սեմինարներ երեխաների	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կօգտվեն շուրջ 520 մասնագետներ:	30.12.2019	70500000

			գնահատման գործիքակազմի կիրառման և Անհատական ուսուցման պլանի վերաբերյալ:			
			Մանկավարժահոգեբանական աջակցություն կցուցաբերվի բարդ ու բազմակի խնդիրներ ունեցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին՝ ուղղված նրանց սոցիալիզացմանը, գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններից կօգտվեն ընդհանուր թվով շուրջ 100 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:		
			Կիրականացվի մոնիթորիգ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից սպասարկվող դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում:	Կիրականացվի մոնիթորիգ շուրջ 120 ուսումնական հաստատություններում:		
			Կիրականացվի մոնիթորիգ համընդհանուր ներառական կրթության համակարգին չանցած մարզերի՝ ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, որտեղ սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:	Կիրականացվի մոնիթորիգ հանրապետության 57 ուսումնական հաստատություններում:		
			Կիրականացվի դեզագրեգացված վիճակագրական	Պարբերաբար կիրականացվի ամփոփ		

			տվյալների հավաքագրում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ:	վիճակագրական տվյալների ներկայացում՝ օգտվելով ԿԳՆ ԿՏԱԿ-ի կողմից վարվող տվյալների բազայից: Տվյալները կներկայացվեն դեզագրեգացված՝ ըստ մարզերի, սեռատարիքային կազմի, ուսումնական հաստատության, երեխայի կարիքի ծանրության աստիճանի:		
			Խորհրդատվություններ և սեմինարներ կանցվացվեն դպրոցներում և այլ ուսումնական հաստատություններում, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում, ինչպես նաև Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում՝ աջակցության ծառայությունների տրամադրման կարգի ու գնահատման գործիքակազմի վերաբերյալ:	Կտրամադրվեն՝ շուրջ 100 խորհրդատվություններ 57 ուսումնական հաստատություններում, շուրջ 110 խորհրդատվություններ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում: Խորհրդատվություններից ու սեմինարներից կօգտվեն շուրջ 800 մասնակիցներ (հաստատությունների ղեկավարներ, մանկավարժներ, ուսուցչի օգնականներ, ծնողներ, երեխաներ, այլ), ինչպես նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների շուրջ 520 մասնագետներ:		

3.	Կրթության կազմակերպման ն օժանդակող նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում:	Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությանն օժանդակելու նպատակով աշխատանքային, ուսումնամեթոդական ու այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում:	Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների համար միասնական մոտեցումներ սահմանելու նպատակով կմշակվեն կենտրոնների պարտադիր վարման փաստաթղթերը, կենտրոնների աշխատակիցների պաշտոնների նկարագրությունը և այլն:	Կմշակվեն կենտրոններում պարտադիր վարման փաստաթղթերի ցանկը, ձևանմուշները, փաստաթղթերի վարման կարգը, հիմնական աշխատակազմի պաշտոնների նկարագրությունը: Ընդհանուր առմամբ՝ 4 փաթեթ:	30.12.2019	27729100
			Մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացին օժանդակելու նպատակով կմշակվեն և կիրապարակվեն ուսումնական ու մեթոդական գրականություն (այդ թվում՝ դիդակտիկ պարագաներ, խաղեր, զարգացնող նյութեր):	Կմշակվեն 2 մեթոդական ձեռնարկներ՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետների համար:		
			Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման նպատակով կմշակվեն, կիրապարակվեն ու ձեռք կբերվեն ծրագրեր, ձեռնարկներ, ուսումնական այլ նյութեր:	Ընդհանուր թվով նախատեսվում է ձեռք բերել 3 ուսումնաօժանդակ նյութ:		
	Պահանջվող գումարը(դրամ)	188 229 100 ՀՀ դրամ				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

Կրթության և գիտության	<<Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն>> ՊՈԱԿ
նախարարություն	
ք.Երևան, Կառավարական 3 շենք	Ք.Երևան, Հ.Քաջազնունի 12
ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	Թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900011011732	Հ/Հ 900018001801
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 02661245
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
_____ Ն.Հարությունյան	_____ Լ.Ասրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/